

ПРАВИЛА ИСПОЛЬЗОВАНИЯ ПОДАРОЧНОЙ КАРТЫ СПОРТМАСТЕР	ՄՊՈՐՏՄԱՍՏԵՐԻ ՆՎԵՐ ԲԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆԵՐ
1. Настоящие Правила в соответствии с п. 1 ст. 449, абз. 2 п. 1 ст. 451, п. 2 ст. 453, п. 1 ст. 454 Гражданского кодекса Республики Армения являются публичной офертой Компании. Акцептом оферты (то есть полное и безоговорочное принятие всех условий настоящей оферты) является приобретение Подарочной карты СПОРТМАСТЕР (далее по тексту – Подарочная карта) и предъявление её к оплате. С момента акцепта настоящей оферты у Компании возникает обязанность принять у предъявителя Подарочную карту в счёт оплаты товаров в соответствии с условиями настоящей оферты.	1. Սույն Կանոնները, համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 449 հոդվածի 1-ին մասի, 451 1-ին մասի 2-րդ պարբերության, 453 հոդվածի 2-րդ մասի, 454 հոդվածի 1-ին մասի, հանդիսանում են Ընկերության հրապարակային առաջարկ: Առաջարկի ընդունում (այսինքն՝ սույն առաջարկի բոլոր պայմանների ամբողջական և անվերապահ ընդունում) է համարվում ՄՊՈՐՏՄԱՍՏԵՐ Նվեր քարտի (այսուհետ՝ Նվեր քարտ) ձեռքբերումը և այն վճարման ներկայացնելը: Այս առաջարկի ընդունման պահից՝ Ընկերությունը պարտավորվում է ներկայացնողից ընդունել Նվեր քարտը որպես ապրանքի դիմաց վճար՝ սույն առաջարկի պայմաններին համապատասխան:
2. Подарочная карта – пластиковая карта, удостоверяющая право ее предъявителя однократно выбрать и получить любой товар из ассортимента магазинов СПОРТМАСТЕР (далее - магазин(ы)) в обмен на сумму номинала Подарочной карты. Срок действия Подарочной карты – период времени, началом которого является активация Подарочной карты (Подарочная карта активируется в момент внесения суммы денежных средств соответствующего номинала в кассу магазина, до истечения срока действия (3 года с момента активации), при наступлении которого обязанности Компании по настоящей оферте считаются исполненными, а действие настоящей оферты – прекратившейся.	2. Նվեր քարտ - պլաստիկ քարտ, որը հաստատում է այն ներկայացնողի իրավունքը՝ ընտրելու և ստանալու ցանկացած ապրանք ՄՊՈՐՏՄԱՍՏԵՐ խանութների տեսականուց (այսուհետ՝ խանութ(ներ)), Նվեր քարտի անվանական արժեքի փոխարեն: Նվեր քարտի վավերականության ժամկետ – ժամանակահատված, որի սկիզբը Նվեր քարտի ակտիվացումն է (Նվեր քարտը ակտիվանում է համապատասխան անվանական դրամական միջոցները խանութի դրամարկղ մուտքագրվելու պահին), մինչև վավերականության ժամկետի (ակտիվացման պահից՝ 3 տարի) ավարտը, որի վրա հասնելու դեպքում՝ Ընկերության կողմից սույն առաջարկի համաձայն ստանձնած պարտավորությունները համարվում են կատարված, և սույն առաջարկի գործողությունը համարվում է դադարեցված:
3. Номинал Подарочной карты – сумма денежных средств, внесённых приобретателем Подарочной карты, которая засчитывается в счёт оплаты по договору розничной купли-продажи товара.	3. Նվեր քարտի անվանական արժեքը – Նվեր քարտը ձեռքբերողի կողմից մուտքագրված դրամական միջոցների գումար, որը հաշվարկվում է ապրանքի մանրածախ առուվաճառքի պայմանագրով սահմանված վճարման դիմաց:
4. Приобретателем Подарочной карты может быть любое физическое лицо. Предъявителем Подарочной карты может быть только физическое лицо, получающее товар исключительно для личных, семейных, домашних и иных нужд, не связанных с осуществлением предпринимательской деятельности. Компания, приобретатель и предъявитель Подарочной карты гарантируют друг другу, что обладают необходимой право- и дееспособностью, а равно всеми правами и полномочиями, необходимыми и достаточными для заключения и исполнения настоящей оферты.	4. Նվեր քարտի ձեռքբերող կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ: Նվեր քարտի ներկայացնող կարող է լինել միայն ֆիզիկական անձ, ով ապրանքը ստանում է բացառապես անձնական, ընտանեկան, կենցաղային և այլ կարիքների համար, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ: Նվեր քարտ ձեռքբերող Ընկերությունը և այն ներկայացնողը միմյանց երաշխավորում են, որ օժտված են անհրաժեշտ իրավունակությամբ և գործունակությամբ, ինչպես նաև բոլոր իրավունքներով ու լիազորություններով, որոնք անհրաժեշտ և բավարար են սույն առաջարկը կնքելու և կատարելու համար:
5. Подарочная карта принимается во всех розничных магазинах СПОРТМАСТЕР.	5. Նվեր քարտը ընդունվում է բոլոր ՄՊՈՐՏՄԱՍՏԵՐ խանութներում:
6. Номинал Подарочной карты возможен, кратной 500 (пятьсот) драм, от минимальной суммы 5 000 (пять тысяч) драм до максимальной суммы 1 000 000 (один миллион) драм. Подарочная карта активируется в момент внесения суммы	6. Նվեր քարտի անվանական արժեքը հնարավոր է 500 (հինգ հարյուր) դրամի բազմապատիկով՝ նվազագույնը 5 000 (հինգ հազար) դրամից մինչև առավելագույնը՝ 1 000 000 (մեկ միլիոն) դրամ: Նվեր քարտը ակտիվանում է համապատասխան անվանական դրամական միջոցները խանութի դրամարկղ մուտքագրվելու պահին:

денежных средств соответствующего номинала в кассу магазина. Срок действия 3 года с момента активации. Номинал и срок действия Подарочной карты можно узнать на кассе магазина. Приобрести Подарочную карту возможно только в магазине Приобретателем.	Վավերականության ժամկետը 3 տարի է՝ սկսած ակտիվացման պահից: Նվեր քարտի անվանական արժեքը և վավերությունը կարելի է իմանալ խանութի դրամարկղում: Նվեր քարտ կարելի է ձեռք բերել միայն խանութում:
7. Приобретение Подарочной карты либо её получение от приобретателя Подарочной карты означает полное ознакомление с настоящими Правилами и их принятие. В случае несогласия лица, приобретающего либо получающего Подарочную карту с Правилами в целом или с их отдельными положениями, рекомендуется отказаться от приобретения либо получения Подарочной карты.	7. Նվեր քարտի ձեռքբերումը կամ դրա ստացումը ձեռքբերողից նշանակում է լիարժեք ծանոթություն սույն Կանոններին և դրանց ընդունում: Եթե Նվեր քարտը ձեռքբերողը կամ ստացողը համաձայն չէ սույն Կանոններին կամ դրանց առանձին դրույթներին, խորհուրդ է տրվում հրաժարվել Նվեր քարտը ձեռք բերելուց կամ ստանալուց:
8. Приобретатель Подарочной карты обязан довести до лица, которому передаётся Подарочная карта, положения настоящих Правил.	8. Նվեր քարտը ձեռքբերողը պարտավոր է տեղեկացնել այն անձին, ում փոխանցվում է Նվեր քարտը, սույն Կանոնների դրույթների վերաբերյալ:
9. Особенности Подарочной карты: 9.1. Подарочная карта используется при получении товара только один раз вне зависимости от размера ее номинала: • если цена выбранного товара (товаров) ниже номинала Подарочной карты, остаток денежными средствами не выплачивается; • если цена выбранного товара (товаров) выше номинала Подарочной карты, предъявитель должен доплатить недостающую сумму. Допускается суммирование номиналов нескольких Подарочных карт. • Номинал Подарочной карты считается предоплатой и при покупке Подарочной карты выдаются чек с пометкой «Предоплата». 9.2. По истечении срока действия Подарочная карта становится недействительной. Подарочная карта обмену и возврату не подлежит – денежный эквивалент номинала Подарочной карты или его остатка не подлежат возврату наличными денежными средствами как в период действия Подарочной карты, так и по истечении срока действия Подарочной карты. 9.3. Подарочная карта является собственностью Компании и после использования не возвращается. 9.4. Подарочная карта является предъявительской – в случае утери не блокируется и не восстанавливается. 9.5. При получении выбранного товара выдается кассовый чек, в котором содержатся данные об использованной Подарочной карте и указана сумма доплаты, если она была. 9.6. На товар, получаемый по Подарочной Карте, распространяются все скидки, действующие в магазине на момент заключения договора купли-продажи товара.	9. Նվեր քարտի առանձնահատկությունները. 9.1. Նվեր քարտը, անկախ դրա անվանական արժեքի չափից, օգտագործվում է միայն մեկ անգամ ապրանք ստանալիս՝ • եթե ընտրված ապրանքի (ապրանքների) գինը ցածր է Նվեր քարտի անվանական արժեքից, ապա դրամական միջոցների մնացորդը հետ չի վճարվում/վերադարձվում, • եթե ընտրված ապրանքի (ապրանքների) գինն ավելի բարձր է, քան Նվեր քարտի անվանական արժեքը, ապա ներկայացնողը պետք է վճարի բացակայող/մնացած գումարը: Թույլատրվում է մի քանի Նվեր քարտերի անվանական արժեքների գումարում: • Նվեր քարտի անվանական արժեքը համարվում է կանխավճար և դրա ձեռքբերման պահին տրամադրվում է դրամարկղի անդորրագիր՝ “Կանխավճար” նշումով: 9.2. Նվեր քարտի վավերականության ժամկետը լրանալուց հետո՝ Նվեր քարտը դառնում է անվավեր: Նվեր քարտը փոխանակման կամ վերադարձի ենթակա չէ. Նվեր քարտի անվանական արժեքին համարժեք դրամը կամ դրա մնացորդը ենթակա չեն վերադարձման ինչպես Նվեր քարտի վավերականության ժամկետում, այնպես էլ Նվեր քարտի վավերականության ժամկետի ավարտից հետո: 9.3. Նվեր քարտը Ընկերության սեփականությունն է և օգտագործումից հետո այն չի վերադարձվում: 9.4. Նվեր քարտը ներկայացուցչական է. կորստի դեպքում, այն չի արգելափակվում և չի վերականգնվում: 9.5. Ընտրված ապրանքը ստանալիս՝ տրվում է դրամարկղի անդորրագիր, որը պարունակում է տվյալներ օգտագործված Նվեր քարտի և հավելավճարի չափի վերաբերյալ, եթե այդպիսին առկա է: 9.6. Նվեր Քարտով ստացված ապրանքի նկատմամբ տարածվում են ապրանքի առուվաճառքի պայմանագրի կնքման պահին խանութում գործող բոլոր զեղչերը:

10. Действие Клубной программы СПОРТМАСТЕР: • бонусами можно оплатить не более 30% стоимости покупки, на оставшуюся сумму покупки применить Подарочную карту (согласно правилам Клубной программы); • на сумму покупки, оплаченную Бонусами или Подарочной картой, Бонусы не начисляются; • бонусы начисляются только на часть суммы покупки, которая оплачена денежными средствами. 11. Возврат и обмен товара, приобретённого с использованием Подарочной карты, осуществляется в соответствии с законодательством Республики Армения. В случае удовлетворения требования потребителя о расторжении договора купли-продажи товара, возврат средств осуществляется путём выдачи новой Подарочной карты равной цене (в соответствии с кассовым чеком), за которую был приобретён возвращаемый товар. Срок действия новой Подарочной карты должен быть не менее срока действия исходной Подарочной карты. 12. Компания является эмитентом Подарочной карты и оставляет за собой право в любое время изменять настоящие Правила. Актуальная информация – на сайте https://sportmaster.com/hy-am/.	<p>10. ՄՊՈՐՏՄԱՍՏԵՐ ակումբային ծրագրի գործողությունը`</p> <ul style="list-style-type: none"> <li>• բոնուսներով կարելի է վճարել գնման արժեքի ոչ ավելի, քան 30% -ը վճարելու համար, իսկ մնացած գնման արժեքի մնացած մասի համար` օգտագործել Նվեր քարտը (Ակումբային ծրագրի կանոնների համաձայն), • Բոնուսներով կամ Նվեր քարտով վճարված գնման արժեքի գումարի նկատմամբ բոնուսներ չեն հաշվեգրվում, • բոնուսները հաշվեգրվում են միայն գումարի այն մասի նկատմամբ, որը վճարվել է դրամական միջոցներով: <p>11. Նվեր քարտի միջոցով ձեռք բերված ապրանքի վերադարձն ու փոխանակումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Ապրանքի առուվաճառքի պայմանագիրը լուծելու սպառողի պահանջի բավարարման դեպքում` դրամական միջոցների վերադարձը կատարվում է նոր Նվեր քարտի տրամադրմամբ, որի անվանական արժեքը հավասար է ձեռք բերված ապրանքի գնին (համաձայն դրամարկղային անդորրագրի), որը վերադարձվում է: Նոր Նվեր քարտի վավերականության ժամկետը պետք է լինի ոչ պակաս, քան առաջին Նվեր քարտի վավերականության ժամկետը:</p> <p>12. Ընկերությունը Նվեր քարտի թողարկողն է և իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ փոխել սույն Կանոնները: Ակտուալ տեղեկատվությունը ներկայացված է https://sportmaster.com/hy-am/ կայքում:</p>
---	---